

Վալթեր Բենիամին

## Թարգմանիչէն ակնկալուածը\*

Արուեստի գործի մը կամ արուեստի ձեւի մը դէմ յանդիման՝ զայն ընկալողներու նկատառումը երբեք բեղուն չէ եղած: Ի հարկէ՝ ոչ միայն որոշ հանրութեան մը կամ իր ներկայացուցիչներուն հետ ամէն տեսակի յարաբերութիւն կը շեղեցնէ ճամբէն, այլ՝ «իտեալ» ընկալողի մը գաղափարն իսկ արուեստին վերաբերող տեսաբանական բոլոր վիճարկումներուն մէջ վնասակար է, քանի որ ասոնք ուրիշ բան ենթադրելու պէտք չունին եթէ ոչ ընդհանուր կերպով՝ մարդուն գոյութիւնն ու էութիւնը: Արուեստն ալ իր կարգին եւ նոյն ձեւով՝ մարդուն մարմնական ու հոգեկան էութիւնը կ'ենթադրէ — բայց արուեստի գործերէն ո՛չ մէկը ուշադրութիւն կ'ընծայէ ատոր: Այդ իմաստով՝ ո՛չ մէկ քերթուած ընթերցողի մը համար յօրինուած է, ո՛չ մէկ նկար դիտողի մը համար, ո՛չ մէկ համանուագ՝ ունկնդիրի մը համար:

Իսկ թարգմանութիւն մը արդեօք բնագիրը չհասկցող ընթերցողներո՞ւն ուղղուած է: Այդպիսի արժեւորում մը անշուշտ կը թուի որոշ չափով բացատրել երկուքին միջեւ մակարդակի տարբերութիւնը արուեստի մարզին մէջ: Կը թուի նաեւ միակ հաւանական դրդապատճառը ըլլալ, որ կը մղէ «նոյն»ը կրկնուած ձեւով ըսելու:

---

\* Վալթեր Բենիամինի «Die Aufgabe des Übersetzers» վերնագրուած այս էջերը լոյս տեսած են 1923ին, որպէս յառաջան ֆրեսացի բանաստեղծ՝ Շարլ Պոտլէտի բանաստեղծութիւններէն փունջ մը պարունակող հատորին համար: Կը կարդանք զայն այսօր Բենիամինի Ամբողջական գործերուն մէջ, Walter Benjamin, *Gesammelte Schriften*, Band IV-1, էջ 7-21, Suhrkamp Verlag, Ֆրանկֆուրթ, 1980: Սոյն թարգմանութեան առաջին յեղումը լոյս տեսած էր ԿԱՄ հանդէսին մէջ, թիւ 1, 1980: Ինչ որ կը հրամցենք այստեղ՝ այդ առաջին տարբերակին վերանայուած ու բարեփոխուած տարբերակն է: Տեղ տեղ, փակագիծի մէջ նշուած են գերմաներէն բառեր որոնց թարգմանութիւնը բացատրութեան կը կարօտէր: Բացատրութիւնները տրուած են վերջաւորութեան գետնողուած խմբագրական ծանօթագրութիւններով:

Ի՞նչ «կ'ըսե՞» սակայն գրական գործ մը (eine Dichtung)<sup>1</sup>: Ի՞նչ կը հաղորդէ կամ կը փոխանցէ ան: Շատ քիչ բան անոր՝ որ գայն կը հասկնայ: Էականը իր մէջ հաղորդակցութիւն չէ, ո՛չ ալ հաղորդուած խօսք: Այնպէս որ թարգմանութիւն մը որ պիտի ուզէր բան մը հաղորդել ոչինչ կը հաղորդէ իրականին մէջ եթէ ոչ՝ հաղորդակցութիւնը, փոխանցումը — այսինքն՝ ինչ որ էական չէ: Յատկանիշն է ասիկա արդէն գէշ թարգմանութիւններուն: Բայց գրական գործի մը մէջ հաղորդումէն անդին գտնուածը — եւ գէշ թարգմանիչները նոյնիսկ կ'ընդունին որ այդ է էականը — ընդհանրապէս այն չէ՞ որ կը նկատուի որպէս անըմբռնելի, խորհրդաւորը, «բանաստեղծական»ը: Մէկ խօսքով, այն՝ գոր թարգմանիչը կրնայ վերահաստատել միայն եթէ ինքն ալ գրող է: Իրականութեան մէջ՝ ասկէ կը բխի երկրորդ յատկանիշը գէշ թարգմանութիւններուն, երբ ասոնք ոչ-նշգրիտ փոշանցում մըն են ոչ-էական պարունակութեան մը: Եւ ասիկա այսպէս կը մնայ այնքան ատեն որ թարգմանութիւնը կ'ուզէ ընթերցողին օգտակար ըլլալ: Բայց եթէ թարգմանութիւնը ընթերցողին համար սահմանուած ըլլար, կարելի պիտի ըլլար նոյն բանը ըսել բնագիրին մասին: Եթէ ճիշդ է որ բնագիրը այդ սահմանումը չի յարգեր, կարելի չէ թարգմանական արարքը հասկնալ այդպիսի յարաբերութենէ մը մեկնելով:

Թարգմանութիւնը ձեւ մըն է: Ըմբռնելու համար գայն իբրեւ այդ, պարտինք վերադառնալ բնագիրին: Ի հարկէ՝ հոն է որ կը գտնուի թարգմանութեան օրէնքը, ծուարած բնագիրին թարգմանելիութեան մէջ: Գործի մը թարգմանելիութեան հարցը սակայն երկդիմի հարց մըն է: Իբրեւ հարց՝ կրնայ դրուիլ նախ հետեւեալ ձեւով. գործը պիտի գտնէ՞ երբեք իր ընթերցողներու փաղանգին մէջ՝ հաստ մը որ ըլլայ իր գոհացուցիչ թարգմանիչը: Կրնայ դրուիլ սակայն ուրիշ ձեւով մը, աւելի հարազատ. բնագիրը ըստ էութեան՝ կը վերցնէ՞ թարգմանութիւնը, եւ ուրեմն — համաձայն թարգմանական ձեւի նշանակութեան — կը պահանջէ՞ արդեօք գայն: Սկզբունքով՝ առաջին հարցումին հետեւելիք պատասխանը խնդրական պիտի ըլլայ, իսկ երկրորդինը՝ փաստացի: Մակերեսային մտածողութիւն մը միայն կրնայ երկու հարցումները հաւասար նկատել, անտեսելով երկրորդին անկախ բնոյթը: Այդպիսի դիրքորոշման մը դէմ՝ հարկ է առարկել որ յարաբերական որոշ յղացքներ իրենց լաւագոյն իմաստը կը ստանան երբ յառաջագունէ մարդուն չեն յղուիր: Կարելի պիտի ըլլար օրինակ անմոռանալի կեանքի մը կամ պահու մը մասին խօսիլ, նոյնիսկ եթէ ամէն մարդ գայն մոռցած ըլլար: Ի հարկէ՝ եթէ իր էութիւնն է չմոռցուիլը, այդ վերադիրը սխալ պիտի չըլլայ, այլ՝ պիտի մնայ իբրեւ պահանջ մը որուն մարդիկ պարզապէս չեն համապատասխաներ, եւ միեւնոյն ատեն՝ պիտի պարունակէ իր մէջ յղումը դէպի այն ծիրը ուր կը գտնէ իր համապատասխանը. Աստուծոյ յիշողութիւնը: Յարակցաբար՝ լեզուական կերպաւորումներու թարգմանելիութեան մասին

պիտի կրնայինք խօսիլ այն պարագային իսկ ուր այդ կերպաւորումները մարդոց կողմէ անթարգմանելի ըլլային: Եւ արդէն՝ այդպէս ալ պէտք չէ՞ նկատենք զանոնք մինչեւ որոշ աստիճան մը, եթէ որդեգրենք թարգմանութեան ճշգրիտ սահմանում մը: - Այդպիսի լուծումի մը պարտինք ենթարկել այն հարցումը թէ անհրաժեշտ է այս կամ այն լեզուական կերպաւորումին թարգմանութիւնը: Ի հարկէ՝ եթէ ճիշդ է որ թարգմանութիւնը ձեւ մըն է, այն ատեն՝ թարգմանելիութիւնը էական պէտք է նկատուի որոշ գործերու պարագային:

Թարգմանելիութիւնը կը պատկանի էապէս որոշ գործերու – այդ՝ չի նշանակեր որ թարգմանուիլը էական է իրենց համար. կ'ուզէ միայն ըսել որ բնագիրին ներյատուկ որոշակի նշանակութիւն մը կը դրսեւորուի իր թարգմանութեամբ: Յստակ է որ թարգմանութիւնը, որքան ալ լաւ ըլլայ, բան մը չի կրնար նշանակել բնագիրին համար: Մնաց որ սերտ կապակցութիւն մը կը պահէ բնագիրին հետ, ասոր թարգմանելիութեան ընդմէջէն: Եւ այդ կապակցութիւնը այնքան աւելի սերտ է որքան ան բնագիրին համար բան մը չի նշանակեր այլեւս: Այս կապակցութիւնը բնական պէտք է ըսուի, կամ աւելի ճիշդ՝ կեանքի կապակցութիւն մը: Այնպէս՝ ինչպէս կեանքի դրսեւորումները ներքնապէս կապուած են կենդանութեան, առանց որ բան մը նշանակեն անոր համար, նոյն ձեւով ալ՝ թարգմանութիւնը կը բխի բնագիրէն: Ճիշդ է՝ ոչ թէ իր կեանքէն, այլ՝ իր «վերապրում»էն: Ի հարկէ՝ թարգմանութիւնը բնագիրէն ետքն է որ կու գայ եւ ամենէն նշանակալից գործերուն համար որոնք իրենց թարգմանիչը իրենց ծնունդի ժամանակաշրջանին մէջ չէին կրնար գտնել՝ կը նշէ ան ապագային մէջ երկարող իրենց կեանքին ներկայ հանգրուանը: Արուեստի գործի մը ապրելու եւ վերապրելու գաղափարը պէտք է հասկնալ հոս ամբողջովին ոչ-փոխաբերական իմաստով մը: Մտածողութեան ամենէն նեղմիտ ժամանակներուն իսկ՝ գիտցուած է թէ կեանքը կարելի չէ վերագրել միայն գործարանային մարմնականութեան: Ինչ որ պատճառ պէտք չէ ըլլայ փոխադարձաբար իր տիրութիւնը ճապարհանելու հոգիի մաշած յղացքին ներքեւ, ինչպէս փորձած է ընել ֆէշները, չյիշելով տակաւին կեանքի սահմանումները որ կը տրուին կենդանիին յատուկ աւելի եւս անկատար պահերու միջոցաւ, ինչպէս՝ զգայութիւնը, որ կրնայ զայն մէջ ընդ մէջ միայն յատկանշել: Կեանքի յղացքը կը հասնի իր ճշմարտութեան հոն միայն՝ ուր կեանքը կը վերագրուի այն ամէն ինչին որմէ կայ պատմութիւն, առանց ըլլալու պատմութեան բեմը սոսկ: Ի հարկէ՝ պատմութենէն մեկնելով է, եւ ո՛չ՝ բնութենէն – ուր մնաց՝ բնութեան այն խախտուտ յղացքէն զոր կը յատկանշեն զգայութիւնը եւ հոգին – որ կարելի է վերջին հաշուով կեանքի շրջածիրը որոշադրել: Ասկէ իմաստասէրին համար՝ պարտականութիւնը բնական կեանքի բոլոր ձեւերը աւելի լայնածիր այն կեանքին ընդմէջէն հասկնալու՝ որ պատմութեան կը պատկանի: Եւ արդէն

գործերու շարունակական վերապրումին ճանաչումը անհամեմատօրէն աւելի դիւրին չէ՞ քան թէ արարածներունը: Արուեստի մեծ գործերու պատմութիւնը կ'ըսէ թէ ի՛նչ աղբիւրներէ սերած են անոնք, թէ ի՛նչ էր անոնց կերպարանքը արուեստագէտի ժամանակաշրջանին, եւ թէ ինչպէս շարունակած են հիմնովին յաւիտենապէս վերապրիլ հետագայ սերունդներուն ընդմէջէն: Այս վերջին իրողութիւնը, երբ կայ, կը կոչուի փառք: Թարգմանութիւնները որոնք աւելի են քան թէ իմաստի փոխանցումներ կը ծնին այն ատեն՝ երբ գործ մը, շարունակելով ապրիլ, հասած է իր փառքի ժամանակաշրջանին: Այնպէս որ այդ թարգմանութիւնները չեն սատարեր անոր փառքին — ինչպէս գէշ թարգմանիչները սովորութիւնն ունին ըսելու իրենց աշխատանքը արդարացնելու համար — այլ ընդհակառակը՝ իրենց գոյութիւնը կը պարտին անոր: Անոնց մէջ՝ բնագիրին կեանքը կը հասնի իր ամենավերջին եւ ամենալայն ծաւալումին, անդադար նորոգուած:

Այս ծաւալումը, իբրեւ մասնայատուկ ու բարձր կեանքի մը ծաւալում, որոշադրուած է նոյնքան մասնայատուկ ու բարձր նպատակամիտութեանէ մը: Կեանք ու նպատակամիտութիւն — ասոնց երեւութապէս դիւրըմբռնելի եւ սակայն ճանաչողութեան չյանձնուող կապակցութիւնը կը բացուի հոն միայն ուր նպատակը, որ յանգակտն է կեանքի բոլոր մասնակի նպատակամիտութիւններուն, չի փնտռուիր նոյն ինքն՝ կեանքի ոլորտէն ներս, այլ՝ անկէ վեր, նոր բնագաւառէ մը ներս: Կեանքի բոլոր նպատակամէտ երեւոյթները, ինչպէս նաեւ՝ անոնց նպատակամիտութիւնը, վերջին հաշուով կեանքին չէ՛ որ կը ծառայեն, այլ անոր էութեան արտայայտութեան, անոր նշանակութեան ներկայացման: Նոյնպէս՝ թարգմանութեան նպատակամիտութիւնը վերջին հաշուով՝ լեզուներու ամենախոր միջյարաբերութեան արտայայտութիւնն է: Անկարելի է որ թարգմանութիւնը հասնի ինքն իրմով այդ թափուն յարաբերութեան յայտնութեան, անկարելի է որ ինքը ստեղծէ զայն. ինչ որ կարելի է սակայն իրեն՝ զայն ներկայացնելն է, զայն սաղմին մէջ եւ հզօր կերպով իրագործելով: Պէտք է ըսել որ նշանակեալի մը այդ ներկայացումը — անոր ծնունդի սերմին ընդմէջէն — ներկայացումի շատ մասնայատուկ եղանակ մըն է, որ անյղանալի է լեզուական կեանքի մարզէն դուրս: Ոչ-լեզուականը ի հարկէ՝ իր համեմատութիւններով ու նշաններով ունի մատնանշումի եղանակներ, որոնք կը տարբերին այս հզօր, կանխայայտ, ակնարկող իրագործումէն: - Լեզուներուն միջեւ այս մտածուած ու ամենախորունկ յարաբերութիւնը մասնայատուկ գուգամիտութեանէ մը յառաջ եկող յարաբերութիւն մըն է: Կը կայանայ այն իրողութեան մէջ՝ որ լեզուները օտար չեն իրարու, որ անոնք յառաջագունէ եւ անկախ պատմական բոլոր աղբրսներէն՝ ազգականութեան կապ մը ունին իրենց ըսել ուզածովը:

Բացատրութեան այս փորձովը՝ կը թուի թէ ապարդիւն շրջանցումներ ըրինք վերադառնալով ի վերջոյ թարգմանութեան աւանդական տեսութեան եւ յանձնուելով անոր: Եթէ թարգմանական արարքին մէջ, լեզուներու ազգականութիւնը կը ձգտի իր իսկ պահպանումին, ինչպէ՞ս կրնայ ատոր հասնիլ եթէ ոչ բնագիրին ձեւն ու իմաստը կարելի եղածին չափ նշգրտապէս փոխանցելով: Ճիշդ է, որ այս ձեւով հասկցուած նշգրտութեան յղացքին մասին, վերոյիշեալ տեսութիւնը պիտի չկարենար արտայայտուիլ, եւ պիտի չկարենար ուրեմն հաշուետուութիւն ներկայացնել թարգմանութեան մէջ էականին մասին: Լեզուներու ազգականութիւնը սակայն շատ աւելի խոր ու որոշադիր ձեւով կը ցուցաբերէ ինքզինք քան թէ երկու գրական գործերու նմանութեան ընդմէջէն: Ըմբռնելու համար բնագիրի ու թարգմանութեան վաւերական յարաբերութիւնը, տեղին է հիմա նշում մը ընել որուն դերը նման է մտածումներու այն ընթացքի դերին որով կը փաստուի ճանաչողութեան քննադատութեան մէջ՝ արտացոլումի տեսաբանութեան անկարելիութիւնը: Ի հարկէ՝ ինչ որ ցոյց կը տրուի այդ քննադատութեան մէջ հետեւեալն է. որ ճանաչողութեան համար՝ որեւէ առարկայականութիւն անկարելի պիտի ըլլար եւ նոյնիսկ առարկայականութեան մը պահանջը անիմաստ պիտի մնար եթէ ան իրականի արտացոլումին մէջ կայանար: Հոս նոյն ձեւով՝ կարելի է ապացուցանել որ որեւէ թարգմանութիւն ինքն իր մէջ արդէն անկարելի պիտի ըլլար եթէ ձգտէր ան ըստ էութեան բնագիրին հետ նմանութեան մը: Որովհետեւ վերապրումին մէջ — որ այդպէս պիտի չկոչուէր եթէ չըլլար ապրողին փոխակերպումն ու նորոգումը — բնագիրը կը փոխուի: Սեւեռուած բառերն իսկ հասունացումի գործընթացի մը ենթարկուած են: Այն ինչ որ հեղինակի ժամանակին՝ իր ստեղծագործական լեզուին հակամիտութիւնը կրնայ եղած ըլլալ, կրնայ հետագային հարթուիլ, տեղի տալով թաքուն այլ հակամիտութիւններու, որոնք նոր մէջտեղ կ'ելլեն կերպաւորուածին մէջ: Ինչ որ ատենօք՝ մատաղ էր՝ կրնայ հետագային հինցած հնչել, ինչ որ ընթացիկ էր՝ կրնայ իր այժմէութիւնը կորսնցուցած ըլլալ: Այդպիսի փոխակերպութիւններու, ինչպէս նաեւ իմաստին վերաբերեալ նոյնքան յանախակի փոփոխութիւններու էատարը ետքը եկողներու ենթակայութեան մէջ փնտռել փոխանակ գայն փնտռելու լեզուին ու իր գործերու իսկական կեանքին մէջ՝ պիտի նշանակէր — ընդունելով իսկ ամենէն իսկ հոգեբանապաշտ մօտեցումը — բանի մի հիմքն ու էութիւնը իրարու հետ շփոթել, կամ աւելի ճիշդ՝ մտածողութեան անկարողութեան մը հետեւանքով՝ պատմական գործընթացներու ամենէն հզօրներէն ու ամենէն բեղուններէն մէկը անգիտանալ: Եւ նոյնիսկ եթէ մարդ ուզէր հեղինակին գրչի վերջին շարժումը գործին տրուած մահացու հարուածը իբրեւ նկատել, թարգմանութեան այդ մեռեալ տեսութիւնը նորէն ալ չէր փրկուեր: Որովհետեւ այնպէս՝ ինչպէս մեծ ստեղծագործութիւններուն երանգն ու նշանակութիւնը դարերու ընթացքին կը կերպարանափոխուին, նոյնպէս ալ՝ կը կեր-

պարանափոխուի թարգմանիչին մայրենի լեզուն: Մինչդեռ գրողին խօսքը իր լեզուին մէջ կը տեւէ ու կը դիմանայ, ուժեղագոյն թարգմանութիւնը սահմանուած է իր լեզուի անումին մասնակցելու եւ նորոգուած լեզուին մէջ ընկլուզելու: Թարգմանութիւնը հեռու է երկու մեռած լեզուներու մունջ հաւասարումը ըլլալէ, այնքան հեռու որ ընդհակառակը՝ բոլոր ձեւերուն մէջ իրեն ամենէն յատուկը այս է. մէջտեղ հանել օտար խօսքի ներքին հասունացումը, ինչպէս նաեւ սեփական խօսքի տղաբերքի ցաւերը:

Եթէ ուրեմն թարգմանութեամբ՝ լեզուներու ազգականութիւնն է որ կ'իմացնէ ինքզինք, ասիկա բնագիրի ու պատճէնի աղօտ նմանութեամբ չէ որ տեղի կ'ունենայ: Նոյնպէս եւ ընդհանուր առմամբ՝ յստակ է թէ նմանութիւնը ազգականութեան հետ չի զուգահիսի անպայման: Եւ լեզուի պարագային գործածուած ազգականութեան այս յղացքը ազգականութեան սովորական իմաստին հետ կը զուգահիսի միայն այն չափով՝ որ երկու պարագաներուն ալ չի բաւեր զայն ծագումի մը հաւասարութեան միջոցաւ սահմանել, թէև սովորական գործածութեան պարագային՝ ծագումի յղացքը անհրաժեշտ կը մնայ: Ո՞ւր պէտք է փնտռել այն ատեն երկու լեզուներու ազգականութիւնը, եթէ զանցառուի պատմական իմաստով հասկցուած ազգականութիւնը: Ամէն պարագայի՝ ո՛չ գործրու, ո՛չ ալ ասոնց բառերուն նոյնանմանութեան մէջ: Լեզուներու գերպատմական նոյնանմանութիւնը կը յենի աւելի այն իրողութեան վրայ՝ որ եթէ առնենք իւրաքանչիւր լեզու իբր ամբողջութիւն, նոյն բանն է հոս եւ հոն որ մտադրուած է, որուն սակայն կրնայ հասնիլ միայն ամբողջութիւնը իրենց զիրար լրացնող դիտարկութիւններուն (Intentionen)<sup>2</sup>: Այդ նոյնը զուտ լեզուն է: Ի հարկէ՝ մինչդեռ երկու տարբեր լեզուներու բոլոր առանձին տարբերը (բառ, նախադասութիւն, համագիր) օտար կը մնան իրարու, լեզուները կ'ամբողջացնեն զիրար իրենց դիտարկութիւններովն իսկ: Այս օրէնքը, որ լեզուի փիլիսոփայութեան հիմնաւոր օրէնքներէն մէկն է, ճիշդ ըմբռնելու համար՝ պարտինք դիտարկութեան մէջ մտադրուածը (das Gemeinte) եւ մտադրութեան եղանակը (die Art der Meinung) մէկը միւսէն զատորոշել: «Brot» եւ «Pain» բառերով մտադրուածը ճիշդ է որ նոյնն է, մտադրութեան եղանակները սակայն կը տարբերին: Մտադրութեան եղանակներուն մէջ՝ կայ այն իրողութիւնը թէ այդ երկու բառերը տարբեր բաներ կը նշանակեն Գերմանին ու Ֆրանսացիին համար, թէ փոխարինելի չեն անոնք, եւ նոյնիսկ վերջին հաշուով՝ ներհակ ձգտումներ կը պարունակեն իրենց մէջ: Մտադրուածին եթէ նայինք սակայն, երկու բառերը, իրենց բացարձակութեան մէջ նկատի առնուած, նոյնը կը նշանակեն: Մինչդեռ այս ձեւով երկու բառերուն մէջ՝ մտադրելու եղանակը ինքզինք կը հակասէ, ընդհակառակը՝ կ'ամբողջանայ ան երկու լեզուներո՛ւն մէջ որոնցմէ այդ բառերը կը սերին: Ինչ որ կ'ամբողջանայ՝ մտադրուածը մտադրելու

եղանակն է: Ի հարկէ մէկ լեզուի մէջ մնալով, չամբողջացած, անոր մտադրածը երբեք կարելի չէ հանդիպիլ համեմատական անկախութեամբ մը, ինչպէս կարելի է այդ՝ առանձին բառերուն ու նախադասութիւններուն մօտ. լեզուին մտադրածը կ'ըմբռնուի միայն անվերջ փոխակերպումի մը ընդմէջէն, մինչեւ որ մտադրելու բոլոր եղանակներու ներդաշնակութեան ընդմէջէն՝ երեւան ելլէ որպէս գուտ լեզուն: Մինչ այդ՝ կը մնայ ան լեզուներուն մէջ թափնուած: Եթէ ճիշդ է սակայն որ ասոնք կ'անին այդ ձեւով դէպի իրենց պատմութեան մեսիական վախճանը, այն ատեն՝ թարգմանութիւնն է որ գործերու յաւիտեական վերապրումէն (Fortleben)<sup>3</sup> ու լեզուներու անվերջ աշխուժացումէն կը ստանայ կայծն ու դրդումը միշտ նորոգուած ձեւով լեզուներու այդ սրբազան անումը փորձնկալելու: Այսինքն՝ հաստատելու, թէ լեզուներուն մէջ թափնուածը որքա՛ն հեռու է դեռ Յայտնութենէն, թէ ո՛ր չափով ներկայ կրնայ դառնալ ան այս հեռաւորութեան անդրադարձող գիտութեան ընդմէջէն:

Ընդունած եղանք ամէն պարագայի այսպէսով՝ որ իւրաքանչիւր թարգմանութիւն այս կամ այն ձեւով՝ առժամեայ ձեւ մըն է միայն լեզուներու օտարութեան հետ հաշուի նստելու: Լեզուներուն մէկը միւսին հանդէպ այս օտարութեան վերաբերող ուրիշ լուծում մը, որ չարձանագրուէր ժամանակին մէջ, որ չըլլար առժամեայ, մէկ խօսքով՝ բոլորակն ու վերջնական լուծում մը կարծես թէ մարդ էակին կարողութենէն դուրս կը գտնուի, կամ ինչ որ ալ ըլլայ՝ անմիջական հետապնդումի մը չի հպատակիր: Միջարկումի ձեւ մը կայ սակայն, իմա՝ կրօնքներուն անումը, որ կը հասունցնէ լեզուներուն մէջ բարձրագոյն լեզուի մը խղածածուկ սերմը: Թարգմանութիւնը ուրեմն — թէեւ չի յաւակնիր իր կերպադրումներու դիմացկունութեան (եւ այդ կէտին վրայ՝ կը տարբերի արուեստէն) — չ'ուրանար միեւնոյն ատեն՝ իր ուղղութիւնը դէպի լեզուներու ներքին ագուցումին վերջին, վերջնական եւ վճռական հանգրուան մը: Իր մէջ՝ բնագիրը կ'անի դէպի աւելի բարձր ու աւելի գուտ ոլորտ մը, որուն մէջ անշուշտ չի յաշողիր ան երկար դիմանալ, հեռու ըլլալով նաեւ իր բոլոր մասերովը անոր հասնելու, թէեւ հիանալիօրէն խորաթափանց ձեւով մը՝ նշան կ'ընէ դէպի այդ ոլորտը, իբրեւ լեզուներու խոստացուած ու արգիլուած Երկիրը, ուր ասոնք պիտի հաշտուին ու ամբողջանան: Բնագիրը լիութեամբ չի հասնիր ուրեմն թարգմանութեան ընձեռած այդ ոլորտին, բայց իր մէջն է որ կը գտնուի ինչ որ թարգմանութեան մը մօտ՝ պարզ փոխանցումէն անդին է: Այս էական կորիզը կարելի է աւելի ճշգրտօրէն բնորոշել, իբրեւ այն՝ որ թարգմանութեան մէջ վերստին թարգմանելի չէ: Մարդ կրնայ առնել անկէ փոխանցումի ճամբով՝ որքան որ կարելի է, եւ զայն թարգմանել, այսուհանդերձ՝ ետ քաշուած ու անմատչելի կը մնայ այն՝ որուն կ'ուղղուէր իրաւ թարգմանիչին աշխատանքը: Թարգմանելի չէ ան բնագիրի ստեղծագործական խօսքին նման, որովհետեւ բովանդակութեան եւ լեզուի յարաբե-

րութիւնը նոյնը չէ այս եւ այն պարագային: Բնագիրին մէջ՝ ասոնք կը կազմեն որոշ միութիւն մը, ինչպէս պտուղն ու կեղեւը, մինչդեռ թարգմանութեան մէջ՝ լեզուն կը պատէ բովանդակութիւնը թագաւորական լայն ծալքերով պատմունանի մը նման: Որովհետեւ կը նշանակէ ան իրմէ բարձր լեզու մը, եւ կը մնայ այդ պատնառով անհաշտ իր իսկ բովանդակութեան, բռնագրօս եւ օտար՝ անոր հանդէպ: Այդ հատումն է որ կ'արգիլէ փոխադրումը, միեւնոյն ատեն՝ աւելորդ դարձնելով գայն: Որովհետեւ գործի մը իւրաքանչիւր թարգմանութիւն, մեկնելով լեզուի պատմութեան որոշակի պահէ մը, ի խնդիր՝ գործին բովանդակութեան որոշակի երեսի մը, կը ներկայացնէ զանոնք — այդ պահն ու այդ երեսը — բոլոր միւս լեզուներուն մէջ: Թարգմանութիւնը կը տնկէ ուրեմն բնագիրը աւելի — հեզնութեամբ ըսուած — վերջնական շրջանակի մը մէջ, առնուազն այն չափով՝ որ որեւէ հետագայ փոխադրում պիտի չկարենայ բնագիրը այդ շրջանակէն տեղափոխել վերստին. նոր թարգմանութիւն մը ստիպուած է միշտ աշխատանքը ծայրէն սկսելու, բնագիրէն այլ մասեր վերբերելով: Պատահական չէ հոս, «հեզնանք» բառով, վիպապաշտներու մտածումներուն գացող ակնարկութիւնը: Միւսներէն առաջ՝ ասոնք ունեցած են գործերու կեանքին մէջ ներթափանցում մը, որմէ թարգմանութիւնը մեծագոյն վկայութիւնը կը բերէ: Ճիշդ է որ գայն իբրեւ այդ գրեթէ չեն նանչցած ու գործադրած, դարձնելով իրենց գործունէութիւնը աւելի՝ դէպի քննադատութիւնը, որ իր կարգին կը կազմէ պահ մը, թէեւ նուազ նշանակալից, գործերու վերապրումին մէջ: Այսուհանդերձ՝ նոյնիսկ եթէ իրենց տեսաբանական աշխատանքը չէր զբաղեր այնքան թարգմանութեան իրողութեամբ, թարգմանական իրենց պատկանելի գործը կը բխէր այդ ձեւին էութեան ու արժանիքին հանդէպ մասնաւոր հասկացողութենէ մը: Ամէն ինչ իրենց մօտ նշան կ'ընէ դէպի այդ հասկացողութիւնը, բայց գրողի պարագային պէտք չունի ան ուժեղագոյն զգացումը ըլլալու. թերեւս ալ գրողին մօտ է որ ան ունի նուազագոյնը՝ իր տեղը: Պատմութիւնն իսկ չի վաւերացներ այն պայմանական նախապաշարումը որուն համաձայն՝ նշանակալից թարգմանիչները գրողներն են, եւ աննշան գրողները տկար թարգմանիչներ կ'ըլլան: Մեծ թարգմանիչներու շարքէն՝ Լութեր, Վոս, Շլէկել անհամեմատօրէն աւելի նշանակալից են իբրեւ թարգմանիչ քան թէ իբրեւ գրող, եւ ուրիշներ — այս անգամ՝ մեծագոյններէն, ինչպէս Հէօլտերլին կամ Կէոքկէ — կարելի չէ ըմբռնել միայն որպէս գրող, եթէ նկատի առնենք անոնց արտադրութեան լման տարողութիւնը: Առաւել եւս՝ որպէս թարգմանիչ: Թարգմանութեան նման, որ բոլոր ձեւերուն մէջ՝ առանձնապատուկ ձեւ մըն է, թարգմանիչէն ակնկալուած գործն ալ պարտի նկատուիլ որպէս առանձնապատուկ գործ մը եւ գրողի գործէն նշգրտօրէն գատորոշուիլ:

Գործունեութիւն մըն է ան որ թարգմանութիւնը ընկալող լեզուի տարածքին վրայ այն դիտարկութիւնը գտնելուն մէջ կը կայանայ՝ որմէ մեկնելով կարելի ըլլայ արթնցնել լեզուին մէջ բնագիրին արձագանգը: Ինչ որ բացարձակապէս զատորոշիչ գիծ մըն է, եթէ համեմատենք գայն ստեղծագործական աշխատանքին հետ, որովհետեւ այդպիսի գործի մը դիտարկութիւնը երբեք չ'ուղղուիր դէպի լեզուն իբրեւ այդ, դէպի լեզուի ամբողջութիւնը, այլ անմիջականօրէն եւ միայն՝ դէպի լեզուական որոշակի կառոյցներ, բովանդակութեան վերաբերող: Թարգմանութիւնը չ'երեւիր ստեղծագործութեան նման՝ լեզուի ներքին անտառին մէջ, այլ կը միջամտէ անկէ դուրս, անոր դէմ յանդիման, առանց երբեք անոր մէջ մտնելու. ասկէ է որ կ'ոգեկոչէ ան բնագիրը, բերելով գայն դէպի այն առանձին վայրերը՝ ուր համապատասխան կերպով՝ սեփական լեզուին մէջ արձագանգը ի վիճակի է օտար լեզուի գործին փոխադարձ հնչեղութիւնը լսելի դարձնելու: Ո՛չ միայն թարգմանութեան դիտարկածը — լեզուն իր ամբողջութեամբ, օտար լեզուի մը պատկանող արուեստի առանձին գործէ մը մեկնելով — կը տարբերի արուեստի գործին կողմէ դիտարկուածէն, այլ՝ անոր դիտարկութիւնն իսկ տարբեր է. գրողին դիտարկութիւնը միամիտ է, առաջնահերթ ու ներհայեցողական, թարգմանիչինը՝ ածանցուած, վերջնահերթ, իտեական: Թարգմանիչին աշխատանքը լիացնող մեծ շարժառիթը՝ մէկ իրաւ լեզուի մէջ բազմաթիւ լեզուները համարկելու փորձն է: Այնպիսի լեզուի մը մէջ՝ ուր առանձին նախադասութիւնները, գործերը, դատողութիւնները երբեք չեն հասկցուիր — մնալով նաեւ ի հարկէ՝ թարգմանութենէն կախեալ — որուն մէջ սակայն լեզուները իրարու հետ կը համաձայնին, մտադրութեան իրենց եղանակով ամբողջացած ու հաշտուած: Եւ եթէ ճիշդ է որ կայ ճշմարտութեան (Wahrheit) լեզու մը, որուն մէջ վերջին գաղտնիքները — որոնց ի խնդիր կը տքնի մտածողութիւնը — առանց պրկումի, լռելեայն, կը պահուին (aufbewahrt sind)<sup>4</sup>, ճշմարտութեան այդ լեզուն՝ ճշմարիտ, իրաւ լեզուն է: Այս լեզուն իսկ է — որուն գուշակութեան ու ցկարագրութեան մէջ կը կայանայ միակ կատարելութիւնը զոր կրնայ յուսալ փիլիսոփան — որ թարգմանութեան մէջ ուժեղ կերպով թաքնուած է: Ինչպէս չկայ փիլիսոփայութեան մուսայ մը, չկայ նաեւ թարգմանութեան մուսայ մը: Փիլիսոփայութիւն եւ թարգմանութիւն այսուհանդերձ՝ ունայնամիտներու գործը չեն, ինչպէս կը հաւաստեն երբեմն գագապաշտ արուեստագէտները: Կայ ի հարկէ փիլիսոփայութեան հանճար մը, որուն ամենէն յատուկ գիծը՝ կարօտն է այդ լեզուին որ թարգմանութեամբ կը ծանուցէ ինքզինք: «Les langues imparfaites en cela que plusieurs, manque la suprême: penser étant écrire sans accessoires, ni chuchotement mais tacite encore l'immortelle parole, la diversité, sur terre, des idiomes empêche personne de proférer les mots qui, sinon se trouveraient, par une frappe unique, elle-même matériellement la vérité»<sup>5</sup>: Եթէ ճիշդ է որ Մալլարմէի այս բառերուն մէջ մտածուածը կը համեմատի ճշգրտօրէն

փիլիսոփայութեան փնտռածին, այն ատեն՝ թարգմանութիւնը, իր մէջ պարունակուած այդպիսի լեզուի մը սաղմովը, կը գտնուի ստեղծագործութեան եւ ուսմունքին նիշդ մէջտեղը: Իր գործը, արտայայտչութեան գետնի վրայ, կը մնայ ասոնցմէ քայլ մը ետեւ, բայց նոյնքան խորութեամբ կը դրոշմուի պատմութեան մէջ:

Այս լոյսին տակ երբ կը բերուի թարգմանիչէն ակնկալուած գործը, ա՛լ աւելի անթափանց ու մռայլ դառնալու սպառնալիքին տակ կը թուին ըլլալ իր լուծումին ճամբաները: Թարգմանութեան մէջ զուտ լեզուի հասունացման սատարող այդ պարտականութիւնը կը թուի թէ անլուծելի է ընդմիշտ, կը թուի թէ ո՛չ մէկ միջոց կայ գայն սահմանելու: Հարցը որ կը ծագի հետեւեալն է. երբ իմաստի վերարտադրութիւնը կը դադրի չափանիշ ըլլալէ, հողը յանկարծ չի՞ պակսիր, խախուտ չի՞ դառնար մարդու ոտքերուն տակ: Բացասական կողմէն դիտելով մինչեւ հիմա ըսուածները, կարելի է ըսել որ ուրիշ եզրակացութեան մը չէինք ուզեր հասնիլ: Հաւատարմութիւն եւ ազատութիւն՝ թարգմանութեան շուրջ որեւէ վիճարկումի մէջ կիրարկուած ամենէն աւանդական յղացքներն են — ազատութիւն՝ իմաստային վերահաստատման, եւ ի սպաս անոր՝ հաւատարմութիւն՝ խօսքին հանդէպ: Տեսաբանութեան մը համար սակայն, որ ուրիշ բան կը փնտռէ թարգմանութեան մէջ քան թէ իմաստի վերահաստատումը՝ անգործածելի կը թուին ըլլալ այդ յղացքները: Եւ արդէն՝ անոնց աւանդական կիրարկումը կը տեսնէ զանոնք միշտ իրենց անյաղթահարելի երկուութեամբը: Ի հարկէ՝ եթէ իմաստի վերահաստատումն է խնդիրը, ի՞նչով կրնայ հաւատարմութիւնը նպաստել անոր: Առանձին բառին թարգմանութեան հաւատարմութիւնը գրեթէ երբեք չի վերահաստատեր ամբողջովին իմաստը որ այդ բառը ունէր բնագիրին մէջ: Ըստ իր ստեղծագործական նշանակութեան բնագիրին համար՝ բառը չի լրացներ իր պաշտօնը մտադրուածով, այլ կը հասնի այդ իր նշանակութեան՝ մտադրուածը եւ մտադրելու եղանակը իրարու կապող յարաբերութեան մէջ միայն: Այս իրողութիւնը սովորաբար կ'արտայայտուի ըսելով որ բառերը իրենց հետ կը փոխադրեն զգացական շեշտ մը, որմէ կը հետեւցուի նաեւ որ շարահիւսութեան հանդէպ բառացիօրէն հաւատարիմ թարգմանութիւնը կանգուն չի ձգեր իմաստի վերահաստատումի կարելիութիւնը եւ ուղղակի դէպի անհասկնալիութիւն տանելու սպառնալիքին տակ կը գտնուի: 19րդ դարու մարդոց աչքին՝ Հէօլտերլիին կատարած Սոփոկլէսէն թարգմանութիւնները կ'արժէին իբրեւ ահաւոր օրինակներ այս իրողութեան համար: Ինքնին կը հասկցուի վերջապէս՝ թէ որքա՛ն դժուար կը դառնայ իմաստի վերահաստատումը, երբ ձեւի վերահաստատման մէջ ալ հաւատարմութիւն կը փնտռուի: Կը մնայ եզրակացնել այս բոլորէն՝ որ իմաստը պահպանելու փափաքէն չէ որ կարելի է հետեւցնել բառացիութեան պահանջը: Այդ պահպանումին կը սատարէ շատ աւելի անկարգապահ ազատութիւնը գէշ թարգմանիչներու — առանց անշուշտ որեւէ ձեւով

օգտակար ըլլալու գրական գործին եւ լեզուին: Անհրաժեշտ է ուրեմն բառացիութեան պահանջը — որուն իրաւացիութիւնը դիւրըմբռնելի է, բայց որուն հիմը կը մնայ խորաթափուն — աւելի դիպուկ փաստարկումով մը հասկնալի դարձնել: Այնպէս՝ ինչպէս ամանի մը կտորները որպէսզի կարենան ագուցուիլ, պէտք է մինչեւ իսկ իրենց մանրագոյն առանձնայատկութիւններով համապատասխանեն իրարու եւ ո՛չ թէ նման ըլլան մէկը միւսին, նոյնպէս ալ՝ փոխանակ բնագիրին իմաստին նոյնանալու, պէտք է թարգմանութիւնը սիրոյ շարժումով մը՝ սեփական լեզուին մէջ յարմարցնէ մտադրումի եղանակը: Այս ձեւով միայն՝ երկուքը կը ճանչցուին իբրեւ մեծագոյն լեզուի մը հատուածները, ինչպէս նոյն պայմաններուն տակ՝ կտորները կը ճանչցուին իբրեւ ամանի մը հատուածները: Այս պատճառով ալ՝ թարգմանութիւնը պէտք է հրաժարի փոխանցելու միտումէն, պէտք է շատ լայն չափերով՝ իմաստը մէկ ինչով ձգել, ընդունելով որ բնագիրը էական է թարգմանութեան համար այն չափով միայն՝ որ թարգմանիչին ուսերը արդէն իսկ թեթեւցուցած է փոխանցուելիքի կարգաւորութեան պարտականութենէն: Έν ἀρχῇ ἦν ὁ Λόγος, ի սկզբանէ էր Բանն. թարգմանութեան մարզին մէջ ալ կ'արժէ նոյնը: Իմաստին դէմ յանդիման՝ թարգմանութեան լեզուն կրնայ, պարտի՛ նոյնիսկ, ինքզինք ազատ արձակել, հնչեցնելու համար ո՛չ թէ իմաստին դիտարկութիւնը (intentio) իբրեւ վերահաստատում, այլ՝ intentio-ի իր իսկ եղանակը իբրեւ ներդաշնակութիւն, իբրեւ ամբողջացում այն լեզուին՝ որուն մէջ իմաստի դիտարկութիւնը կը փոխանցուէր: Այնպէս որ մեծագոյն գնահատանքը գոր կարելի է ընել թարգմանութեան մը, մանաւանդ՝ իր երեւումի շրջանին, իր լեզուին բնագիրներէն մէկուն նման կարդացուիլը չէ՛: Բառացիութեան միջոցաւ ձեռք ձգուած հաւատարմութեան նշանակութիւնը աւելի այն իրողութեան մէջ կը կայանայ՝ որ գործին ընդմէջէն կը լսուի լեզուի ամբողջացումին մեծ կարօտը: Իրաւ թարգմանութիւնը թափանցիկ է, չի ինքնաձեռք բնագիրը, չի ձգեր գայն ստուերի մէջ, այնպէս մը կ'ընէ ընդհակառակը՝ որ գուտ լեզուն, անոր միջնորդութեամբ ուժեղացած, աւելի եւս իր շուքը տարածէ բնագիրին վրայ: Ինչ որ նախ եւ առաջ՝ շարահիւսութեան փոխադրումովը կը կատարուի. այս փոխադրումը կը բացայայտէ բառը, եւ ոչ՝ նախադասութիւնը, իբրեւ թարգմանիչին էտարրը: Որովհետեւ նախադասութիւնը բնագիրի լեզուին առջեւ ցցուած պատնէ է, իսկ բառացիութիւնը՝ անոր կամարը:

Եթէ թարգմանութեան մէջ հաւատարմութիւնն ու ազատութիւնը միշտ ալ նկատուեր են որպէս իրեքամերժ ձգտումներ, առաջինին շուրջ հոս տրուած մեկնութիւնը չի թուիր երկու եզրերը հաշտեցնել, կը թուի ընդհակառակը երկրորդը որեւէ իրաւունքէ զրկել: Ի հարկէ՝ ի՞նչ բանի կը ձգտի ազատութիւնը թարգմանութեան մէջ եթէ ոչ՝ իմաստի վերահաստատման, որ սակայն պէտք է դադրի, ըսինք, օրէնսդրական բնոյթ

ունենալէ: Մնաց թէ, քանի որ լեզուական կերպաւորումի մը իմաստը կարելի է հաւասար նկատել իր փոխանցումի իմաստին, կայ այդ իմաստին շատ մօտը եւ սակայն անկէ անհունապէս հեռու, պահուած անոր տակ կամ անկէ իսկ յստակ, կտրուած անկէ կամ աւելի ուժով քան որեւէ փոխանցում՝ վերջին ու վնասական բան մը: Բոլոր լեզուներուն մէջ, իրենց բոլոր կերպաւորումներուն մէջ, փոխանցելիէն անդին՝ կայ անփոխանցելի մը, որ կա՛մ խորհրդանշուած է, կա՛մ ալ խորհրդանշող, ըստ համագիրին որուն մէջ երեւան կու գայ ան: Խորհրդանշող է միայն լեզուներու հունաւոր կերպաւորումներուն մէջ, բայց խորհրդանշուած՝ լեզուներու լինելութեան իսկ մէջ: Եւ ինչ որ կը փորձէ ներկայանալ կամ նոյնիսկ ծնիլ լեզուներու լինելութեան մէջ՝ զուտ լեզուի կորիզն իսկ է: Եթէ սակայն այս կորիզը, թաքուն ու հատուածական իր վիճակովն իսկ, ներկայ է կեանքին մէջ իբրեւ խորհրդանշուածն իսկ, լեզուական կերպաւորումներուն մէջ կը բնակի միայն որպէս խորհրդանշող: Այդ վերջին էանիւթը, որ այդտեղ՝ զուտ լեզուն իսկ է, լեզուներուն մէջ լեզուականին միայն եւ անոր կերպափոխումներուն կապուած է, իսկ կերպաւորումներուն մէջ՝ անոր փարած կը մնայ ծանր եւ օտար իմաստը: Ազատագրել գայն այդ իմաստէն, խորհրդանշողը խորհրդանշուածի վերածել, զուտ լեզուն կառուցուած ձեւով՝ լեզուի շարժումին մէջ վերագրաւել — այդ իսկ է թարգմանութեան հզօր ու միակ կարողութիւնը: Այդ զուտ լեզուին մէջ որ ո՛չ մէկ բան չի մտադրեր այլեւս, եւ ո՛չ մէկ բան չ՛արտայայտեր, այլ՝ իբրեւ անարտայայտ ու ստեղծագործ խօսք՝ այն իսկ է՝ որ բոլոր լեզուներուն մէջ հետապնդուածն է, ամէն տեսակի դիտարկութիւն, իմաստ ու փոխանցում կը հասնին խաւի մը ուր դատապարտուած են անհետանալու: Ասոր ընդմէջէն է որ թարգմանութեան ազատութիւնը կը հաստատուի նոր եւ աւելի բարձր իրաւունքներով: Իր էութիւնը չի գտնուիր փոխանցումի իմաստին մէջ, որմէ ազատագրուիլը արդէն հաւատարմութեան գործն էր. սեփական լեզուի տարածքին՝ զուտ լեզուին ի խնդիր է որ թարգմանութեան ազատութիւնը կը պաշտպանէ իր իրաւունքը: Օտարութեան մէջ ախորուած զուտ լեզուն՝ սեփական լեզուին մէջ փրկել, գրական գործին մէջ բանտարկուածը՝ վերաշաղրուած փոխակերպումին մէջ ազատագրել — այդ է թարգմանութեան պարտականութիւնը, անկէ ակնկալուածը: Այս նպատակին ի խնդիր՝ կը պատռէ ան սեփական լեզուի փտած եզերքները, ինչպէս ըրած են Լութեր, Վոս, Հէօլտերլին, Կէրկէ, լայնցնելով գերմաներէնի սահմանները: — Ասկէ ետք եթէ թարգմանութեան եւ բնագիրին յարաբերութեան մէջ իմաստին կապուած նշանակալից բան մը մնաց, փորձենք գայն բացայայտել հետեւեալ բաղդատութեամբ: Այնպէս՝ ինչպէս շօշափագիծը բոլորակին կը դպի հպանցիկ կերպով եւ մէկ կէտի վրայ միայն, եւ այնպէս՝ ինչպէս այդ հպումն իսկ է — եւ ոչ թէ կէտը — որ կ'որոշագրէ օրէնքը որուն համաձայն շօշափագիծը կը գծէ իր ուղիղ ճամբան դէպի անհունը, նոյնպէս ալ՝ թարգմանութիւնը հպանցիկ կերպով կը դպի բնագիրին, իմաստի

անհունապէս փոքր կէտին վրայ, եւ յետոյ՝ հաւատարմութեան օրէնքին համաձայն իր ճամբան կը շարունակէ լեզուի շարժումին ազատութեան մէջ: Այս ազատութեան նշմարիտ նշանակութիւնը յատկանշած է Ռուտովֆ Փանվիթս — առանց գայն անուանակոչելու, ո՛չ ալ հիմնելու — «Եւրոպական մշակոյթի տագնապը» հատորին մէջ պարունակուած իր դատումներով, որոնք Կէօթէի խօսքերուն հետ («Տիվան»ի նշմարներուն մէջ) գերմաներէն լեզուով թարգմանութեան տեսաբանութեան մարգէն ներս՝ լաւագոյնը կը կազմեն անկասկած: Ռ. Փանվիթս կը գրէ հետեւեալը. «Լեզուէ լեզու մեր փոխադրումները, նոյնիսկ՝ լաւագոյնները, կը մեկնին սխալ սկզբունքէ մը. կ'ուզեն հնդկականը, յունականը կամ անգլիականը գերմանացնել փոխանակ գերմանականը հնդկացնելու, յունացնելու կամ անգլիականացնելու: Ունին շատ աւելի մեծ երկիւղ մը իրենց իսկ լեզուական սովորութիւններուն հանդէպ քան թէ օտար գործերու ոգիին հանդէպ ... : Փոխադրողի սկզբունքային սխալը այն է որ կը սեւեռէ սեփական լեզուի պատահական վիճակը, փոխանակ գայն օտարին միջոցաւ հզօր կերպով շարժի դնելու: Ան պարտի՛, նոյնիսկ երբ շատ հեռաւոր լեզուէ մը կը կատարէ փոխադրումը, մխրճուիլ մինչեւ լեզուին վերջին տարրերը, հոն ուր բառ, պատկեր, շեշտ կը միաւորուին: Պարտի՛ իր լեզուն օտար լեզուի միջոցաւ լայնցնել եւ խորացնել. ո՛չ մէկ յղացք ունինք տակաւին գիտնալու եւ ըսելու համար թէ ո՞ր չափով կարելի է ասիկա, թէ ի՞նչ աստիճանի կրնայ իւրաքանչիւր լեզու խորացուիլ այդ ձեւով: Լեզուէ լեզու տարբերութիւնը աւելի մեծ չէ քան թէ բարբառէ բարբառ, բայց ոչ անշուշտ՝ երբ անոնց մօտենանք դիւրութեան ճամբէն, այլ՝ երբ դժուարութիւնները բաւականին յարգենք»<sup>6</sup>:

Ո՞ր չափով կրնայ թարգմանութիւնը համապատասխանել իր ձեւին էութեան. ասիկա կ'որոշադրուի առարկայականօրէն բնագիրի թարգմանելիութենէն: Որքան քիչ արժէք ու արժանիք ունի իր լեզուն, այնքան շատ փոխանցում է ան, եւ այնքան քիչ շահեկանութիւն կայ նաեւ թարգմանութեան համար անոր մէջ, մինչեւ որ իմաստի ամբողջական գերակշռութիւնը — շատ հեռու՝ ձեւային գետնի վրայ կատարեալ թարգմանութեան մը լծակը ըլլալէ — գայն ապարդիւն դարձնէ: Որքան բարձր է ընդհակառակը՝ գործի մը որակը, այնքան աւելի կը մնայ ան դեռ թարգմանելի, իր իմաստին ամենահպանցիկ նկատառումին ընդմէջէն: Այս ամէնը կ'արժէ անշուշտ բնագիրներուն համար: Թարգմանութիւնը ինք՝ անթարգմանելի պէտք է նկատել, ոչ թէ դժուարութեան պատճառաւ, այլ չափազանցուած այն հպանցիկութեան պատճառաւ՝ որով իմաստը կը բնակի զանոնք: Այս գետնի վրայ ինչպէս միւս բոլոր չափանիշներուն համաձայն՝ Հէօլտերլինի թարգմանութիւնները, ի մասնաւորի՝ Սոփոկլէսի երկու ողբերգութիւններուն թարգմանութիւնները, կը ներկայանան իբրեւ հաստատական օրինակներ: Իրենց մէջ, լեզուի ներդաշնակութիւնը այնքան խոր է որ

լեզուն իմաստին կը դպի այնպէս միայն՝ ինչպէս հովը՝ հողմատաւիդին: Հէօլտերլինի թարգմանութիւնները նախատիպարներն են իրենց ձեւին: Նոյն թեքութեամբ միւս թարգմանութիւններուն հետ իրենց յարաբերութիւնը նման է նախատիպարի եւ օրինակի յարաբերութեան, ինչպէս ցոյց կու տայ Պինդարոսի երրորդ Պիւթական տաղին Հէօլտերլինի եւ Պոռխարթի թարգմանութիւններու բաղդատութիւնը<sup>7</sup>: Այս պատճառով ալ՝ իրենց մէջ կը ստանան ահաւոր ու սկզբնական վտանգը ամէն թարգմանութեան — վտանգը որ այդքան լայնացած ու իշխանական լեզուի մը դոները գոցուին, բանտարկելով թարգմանիչը լոռութեան մէջ: Սովոկլէսի թարգմանութիւնները Հէօլտերլինի վերջին գործը եղան: Իրենց մէջ՝ իմաստը կը գահավիժի անդունդէ անդունդ, մինչեւ որ սպառնայ լեզուական խորութիւններուն մէջ հիմնադասակ կորսուելու: Բայց կայ կանգ մը: Ո՛չ մէկ գրութիւն սակայն, բացի Սուրբ Գիրէն — որուն մէջ՝ իմաստը դադրած է ջուրերու բաժանումը ըլլալէ ընդմէջ՝ հոսող լեզուին եւ հոսող Յայտնութեան — կրնայ այդ կանգը ապահովել: Հոն ուր գրութիւնը, անմիջականօրէն, առանց միջամտող իմաստի, ճշմարիտ լեզուի իր բառացիութեամբ, կը պատկանի ճշմարտութեան կամ ուսնունքին, բացարձակապէս թարգմանելի է ան: Ո՛չ այլեւս ի սպաս՝ իրեն, անշուշտ, այլ ի սպաս՝ լեզուներուն: Այդպիսի գրութեան մը դէմ յանդիման՝ թարգմանութենէն պահանջուած վստահութիւնը այնքան անսահման է որ այնպէս՝ ինչպէս անոր մէջ լեզու եւ Յայտնութիւն պէտք է միանան, նոյնպէս ալ թարգմանութեան մէջ՝ պէտք է բառացիութիւն եւ ազատութիւն միանան իրարու: Ի հարկէ՝ այս կամ այն չափով՝ բոլոր մեծ գրութիւնները — բայց մեծագոյն չափով՝ սրբազան գրութիւնները — կը պարունակեն իրենց տողերուն ընդմէջ՝ իրենց հնարաւոր թարգմանութիւնը: Սուրբ Գրոց տողամիջեան տարբերակը նախատիպարն է, կամ իտէալը, բոլոր թարգմանութիւններուն:

---

## Խմբագրական ծանոթագրություններ

- <sup>1</sup> Dichtung բառը իր ամենէն սովորական իմաստով կը նշանակէ «բանաստեղծութիւն»։ Բայց գործածուած է շատ աւելի ընդհանուր կերպով՝ որեւէ գրական ստեղծագործութեան համար։ Խնդիրը այն է, որ «գրականութիւն» ըսելու համար՝ կայ գերմաներէն Literatur բառը, լատիներէն ծագումով բառ մը, որ շրջանառութեան մէջ դրուած է Վիպապաշտներու շրջանին 18րդ դարու վերջին տասնամեակին։ Բենիամին Երբեք չի գործածեր այդ բառը։ Մենք Dichtung բառին դիմաց՝ ըսինք «Քերթուած» կամ «ստեղծագործութիւն», կամ «գրական գործ»։ Ֆրանսացի թարգմանիչը (Maurice de Gandillac) կը թարգմանէ «œuvre littéraire»։ Իսկ համապատասխան արարքին համար (գերմաներէն՝ dichten), ըսինք ընդհանրապէս «ստեղծագործել»։
- <sup>2</sup> Intention Վալթեր Բենիամինի կողմէ փոխ առնուած է Հուսերլի Երեւութաբանութեան բառապաշարէն։ Մէկ անգամ կը գործածուի նոյնիսկ այդ բառին լատիներէն ձեւը (intention)։ Թարգմանեցինք «դիտարկութիւն»։ Բայց քանի որ այդ բառը չունի բայական ձեւ, Բենիամին անոր որպէս հոմանիշ կը գործածէ Meinung, գործարգմանեցինք «մտադրութիւն», բայը ըլլալով meinen, «մտադրել»։ Բայց կրնայինք պահել «դիտարկութիւն» եւ «դիտարկել» ստույգ համար ալ, ինչպէս ըրած էինք սոյն թարգմանութեան առաջին յեղումին առիթով։
- <sup>3</sup> Fortleben։ Ահաւասիկ կարեւոր բառ մը եւս։ Կը նշէ կեանքը որ կը շարունակուի, այսինքն ապագային մէջ՝ գրական գործի մը ճակատագիրը։ Վարանումով թարգմանեցինք «վերապրում», որ գերմաներէն կ'ըսուի նաեւ Überleben, մահէն հողոպրած վերապրողի պարգային։ Անշուշտ երկու իմաստները անկախ չեն իրարմէ։ Գործին ապագայ ճակատագիրը մահէն վերադարձ մըն է, բոլոր պարագաներուն։ Եթէ թարգմանութիւնը չըլլար, գործը լքուած կ'ըլլար, մոռացութեան դատապարտուած։
- <sup>4</sup> Wahrheit, «ճշմարտութիւն»։ Aufbewahren, «պահել, պահպանել»։ Բառախաղէն անդին է երկուքին կողք կողքի գործածութիւնը։ Չեւ մըն է «ճշմարտութիւն» կոչուածին վրայ նոր հայեացք մը նետելու։ Նոյնը կ'ընէ անշուշտ Հայտեկեր։ Այստեղ՝ թարգմանիչը անգոր է։ Ուրկէ՝ ծանօթագրութեան անհրաժեշտութիւնը։
- <sup>5</sup> Հոս՝ Բենիամին չի թարգմաներ իր մէջբերումը եւ անշուշտ՝ յղումը չի տար։ Տե՛ս Stéphane Mallarmé, «Crise de Vers», *Oeuvres complètes*, Gallimard, Pléiade, էջ 363։
- <sup>6</sup> Ռուտոլֆ Փանվից (1881-1961) գերմանացի գրող մըն էր, Ստեֆան Կէօրկէի շրջանակէն։ Տե՛ս Rudolf Pannwitz, *Werke*, հատոր Բ., Die Krisis der europäischen Kultur [Եւրոպական մշակոյթի տագնապը], Նիւրեմպերկ, 1917, էջ 240 եւ 242։ Գերմաներէնը գրուած է առանց մեծատառի եւ առանց ստորակէտի։
- <sup>7</sup> Ռուտոլֆ Պորիսարտ (1877-1945) այսօր քիչ ծանօթ գերմանալեզու բանաստեղծ մըն էր, նաեւ տպաւորիչ եւ շատ բեղուն թարգմանիչ մը, ի միջի այլոց՝ իտալերէնէ եւ հին յունարեւէ։ Պինդարոսի իր թարգմանութիւնները լոյս տեսած են նախ հանդէսներու մէջ, եւ աւելի ուշ միայն հատորով (*Pindarische Gedichte*, 1929)։